



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԿՊԵՏԵ ՄՈՆԹԳԵԼԼՈՅԻ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

- ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Տ. ՍՄԲԱՏ ԱՐՔ. ԼԱՓԱՃԵԱՆԻ ՎԱԽՃԱՆՍԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ



Կիրակի, 17 Յուլիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ Արժ. Տ. Նարեկ Ա. Քհնյ. Փեղիվանեան:

Ս. Պատարագի աւարտին, հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի, ի յիշատակ հոգելոյս Տ. Սմբատ Արք. Լափաճեանի վախճանման Ա.

տարելիցին առիթով:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, Ս. Խաչ Մայր Տաճարի հովիւներուն, հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան կողմէ հոգեճաշ պիտի մատուցուի ներկայ հաւատացեալներուն, եկեղեցւոյ »Բաղրամեան« սրահին մէջ:

Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին՝ ներկայ ըլլալու եւ մասնակից դառնալու եկեղեցական արարողութեանց, յարգելու համար յիշատակը հոգելոյս Սմբատ Սրբազան Հօր:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY CROSS CATHEDRAL IN MONTEBELLO

- REQUEIM SERVICE FOR ARCHBISHOP SUMBAT LAPAJIAN

On Sunday, July 17th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Cross Cathedral in Montebello.

Following Divine Liturgy, the Prelate will preside over requiem service on the one year anniversary of the passing of Archbishop Sumbat Lapajian.

A memorial luncheon will follow at "Bagramian" Hall hosted by the parish Pastors, Board of Trustees, and Ladies Guild.

ԿԻՐԱԿՍՈՒՏՔԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻ

Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Շաբաթ, 16 Յուլիսը տօնն է Հայաստան աշխարհի առաջին քրիստոնեայ թագաւորին ու թագուհիին՝ Ս. Տրդատ եւ Ս. Աշխէնի, որ նաեւ անուանակոչութեան տօնն է Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան:

Նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր, Շաբաթ երեկոյեան Ազգային Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ Կիրակմուտքի յատուկ արարողութիւն տեղի պիտի ունենայ:

Նկատի ունենալով, որ Քրեւեւթա Հովիտի ծխական համայնքը կիրակնօրեայ Պատարագները կ'ունենայ Ազգային Առաջնորդարանիս համանուն Մատրան մէջ, սոյն ժամերգութիւնը այս տարի կազմակերպուած է Քրեւեւթա Հովիտի Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր մատակարար՝ Արժ. Տ. Արտակ Թիւյ. Տեմիրճեանի եւ Հոգաբարձութեան կողմէ:

EVENING SERVICE ON THE NAME DAY OF THE PRELACY CHAPEL

In accordance with the Armenian Church calendar, the Feast of St. Dertad and St. Ashkhen, the first Christian king and queen of Armenia, will be observed on Saturday, July 16th. The feast is also the name day of the Prelacy "St. Dertad and St. Ashkhen" Chapel.

On this occasion, on Saturday, July 16th, Evening Services will be offered at the Chapel presided over by the Prelate.

Given that the Crescenta Valley Parish holds its Sunday service at the Prelacy Chapel, Saturday's service is also being organized by the Pastor Rev. Fr. Ardak Demirjian and the Board of Trustees.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ ԶՕՄ-Ի ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ 91-ՐԴ ԺՈՂՈՎԻՆ ԲԱՑՈՒՄԸ



Հինգշաբթի, 14
Յուլիսին, կ.ա. ժամը 10:30-
ին, ԶՕՄ-ի Շրջանային
Վարչութեան
Պատգամաւորական 91-րդ
Ժողովին բացումը տեղի
ունեցաւ Սանթա Մոնիքայի
Sheraton Delfina պանդոկին
մէջ:

Առաջնորդ Սրբազան
Հայրը ներկայ եղաւ
ժողովին. ան աղօթքով
կատարեց ժողովին

պաշտօնական բացումը եւ ապա փոխանցեց իր խօսքը եւ յաջողութեան
մաղթանքները:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանար Հովիվուտի Ս. Կարապետ
Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Քինյ. Վասիլեան:

Ժողովին ներկայ էր նաեւ Ազգային Վարչութեան ատենապետուհին՝
Տիկին Ռիմա Պօղոսեան:

PRELATE PRESIDES OVER OPENING OF A.R.S 91ST REGIONAL CONVENTION



The Armenian Relief
Society 91st Regional
Convention convened on the
morning of Thursday, July
14th at the Sheraton Delfina
Hotel in Santa Monica.

The Prelate conducted
the opening prayer and
delivered his message on
this occasion.

Archpriest Fr. Vicken
Vassilian accompanied the

Prelate. Executive Council Chair Mrs. Rima Boghossian participated in the convention.
